772
ФU 77822

Арм 7-3/1



Սովետական Արվեստ

5

1974

Ա-103

СОДЕРЖАНИЕ

В выставочных залах

Р. Оганесян—С любовью к жизни и человеку . . 1

С. Арутюнян—Комедия. Проблемы, суждения . . 5

Г. Оганесян—Слово на телеэкране . . . 18

Ш. Хачатрян—Искусство рисунка (художник Р. Хачатрян) 24

А. Габриелян — «Семьнадцать мгновений весны». Странички из дневника . . . 29

Р. Маргуни—«Антоний и Клеопатра» в трактовке переводчиков 36

Жюль Ренар—«Домашний хлеб» (одноактная пьеса) . 42

Л. Ахгердян—Слово другу (к 50-летию Сабира Ризаева) 50

Х. Самвелян—Краткая летопись жизни и деятельности Комитаса 52

В мире искусства . . . 59

В номере помещены две цветные вклейки с репродукциями работ М. Камаляна «Танцующие девушки» и В. Карапетян «Занятие».

На обложке: М. Камалян—«Портрет Анны».

Использованы фото: Б. Мависакаляна, В. Касабяна и А. Клекчяна.

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՐԳԻՍ ԲԱՅԱՆԴՈՒՐ

Խմբագրական կոլեգիա՝
ԽԱՉԱՏՈՒՐ ԱՎԱԳՅԱՆ
(պատասխանատու քարտուղար)
ՍԱՄՍՈՆ ԳԱՍՊԱՐՅԱՆ
ԳԵՎՈՐԳ ԳՅՈՒԼԿՅԱՆ
ՄԵԻԹԱՐ ԴԱՎԹՅԱՆ
ՌՈՒԲԵՆ ԶԱՐՅԱՆ
ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
ԳՐԻԳՈՐ ԽԱՆՋՅԱՆ
ՀԱԿՈԲ ԽԱՉԻԿՅԱՆ
ԼԵՎՈՆ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ
ՍՈՒՐԵՆ ՀԱՍՄԻԿՅԱՆ
ԷՄԱՆՎԵԼ ՄԱՆՈՒԿՅԱՆ
ՍԱՐԳԻՍ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

© «Советакан арвест», 1974 г.

ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ՍՐԱՀՆԵՐՈՒ

ԿՅԱՆՔԻ Ո

Արվեստագետի աշխարհը, եթե ճշմա
վեստագետ է, ոչ միայն նրա իսկ կյանք
զերն ու ապրումները, նրա կենսագրությ
նրա վերաբերմունքը աշխարհի ու մ
հանդեպ։ ՀՍՍՀ վաստակավոր նկարիչ
Քամալյանի ողջ ստեղծագործությունը,
հանդիպելու առիթը ունեցանք վերջերս
տանը բացված նրա աշխատանքների ց
դեսում, պայծառ ու արևոտ, կենսահաս
աշխարհ էր, դեպի կյանքն ու մարդն ուն
հուն սիրո մի անկեղծ արտահայտությ

Երեսնականների վերջերին, դեռևս
Գեղարվեստի ակադեմիայի ուսանող, Մկ
մալյանը առանձին սեր ու հակում դրսևո
ռոմանտիզմի կլասիկների (Ժերիկո, Դե
ապա նաև հայ տաղանդավոր նկարիչ Ա
Քաժբեուկ-Մելիքյանի արվեստի նկատմա

ՇԱՀԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԳԾԱՆԿԱՐԻ ՆՈՐ ՇՈՒՆՉԸ

Ռուդոլֆ Խաչատրյանի արվեստի մասին խորհրդածելիս ակամա հիշում ես նրա ստեղծագործական կենսագրության նշանակալից մի փաստը։ 1959 թվականին, Վիեննայի երիտասարդական համաշխարհային փառատոնին «Ուսանողուհու դիմանկարը» գրաֆիկական աշխատանքի համար նա արժանացավ բրոնզե մեդալի։ Սա քսան-երկուամյա նկարչի բնածին տաղանդի առաջին գնահատությունն էր, որ մի տեսակ նշանավորեց նրա արվեստի ճանաչումն ու նրա մուտքը ստեղծագործական կյանք։

Այժմ ետևում են մնացել որոնումներով ու հաջողություններով լեցուն տասնհինգ տարիներ։ Այդ ընթացքում Ռ. Խաչատրյանը բազմիցս մասնակցել է հանրապետական, միութենական ու միջազգային ցուցահանդեսների, գրաֆիկային զուգընթաց ստեղծել է գեղանկարչական գործեր, որոնց թվում մի շարք թեմատիկ կոմպոզիցիաներ։ Հիշենք դրանցից «Ամբոխները խելագարված», «Վերածնունդ», «Մայրություն», «Երիտասարդություն» կտավները։ Վերջին երկուսի համար երիտասարդ հեղինակը արժանացավ Հայաստանի կոմերիտմիության երկրորդ մրցանակին (1965)։ Ավելի ուշ, 1969-ին, Կոմիտասի գրաֆիկական դիմանկարը, որ ներկայացվել էր մեծ կոմպոզիտորի 100-ամյակին նվիրված ցուցահանդեսին, ստացավ Հայաստանի կուլտուրայի մինիստրության առաջին մրցանակը։

Վերջին երկու տարում Ռ. Խաչատրյանը կրկին ինտենսիվ աշխատում է գրաֆիկայի մարզում։ Նոր աշխատանքների մի մասն արդեն ներկայացվել է Երևանում և Մոսկվայում կազմակերպված «ՍՍՀՄ-ը մեր Հայրենիքն է» ցուցահանդեսներին, ինչպես նաև ցուցադրվել դեմոկրատական երկրներում։ Արվեստաբանական մամուլը լայնորեն արձագանքել է դրանց։

Նկարչի արվեստանոցում ծանոթանում եմ նրա վերջին աշխատանքներին։ Մատիտով կատարված դիմանկարներ են դրանք՝ հաճախ բնանկարի ֆոնի վրա, և նատյուրմորտներ։ Խաչատրյանի նոր գործերը, առաջին հայացքից ընկալվում են իբրև նախկիններ օրինաչափ շարունակություն և ամենից ավելի հիշեցնում են նրա անդրանիկ գծանկարները, ինչ-որ հարազատ կապ ունեն դրանց հետ։

Ռ. Խաչատրյանի ստեղծագործական ուղին սկսվեց խոր հետաքրքրությամբ դեպի երիտասարդությունը։ Հետագա տարիներին մերթ ընդ մերթ միայն նա անդրադարձավ այդ թեմային։ Իսկ նոր աշխատանքների ներշնչման աղբյուրը ամբողջապես երիտասարդությունն է, երիտասարդականը, նոր սերնդի հոգեկան կերտվածքի բացահայտումը։

Ի՞նչ է վկայում սա։ Արդյոք նոր աշխատանքները վերադա՞րձ են դեպի ետ։ Եթե այո, ապա, ինձ թվում է, մի առումով միայն։ Ստեղծագոր-

Ռուդոլֆ Խաչատրյան. Ուսանողուհու դիմանկար. 1959

ծելու ճշմարիտ ուղին իրականության սեփական ընկալման, արվեստագետի «ես»-ի, նրա ներաշխարհում կյանքի դրդումներից սրոփող հույզերի ու ապրումների բացահայտման մեջ է: Արվեստագետի զգացումները ինչ-որ սահմաններում անփոփոխ են, ու այդ առումով է ասված, թե «նկարիչն իր կյանքում շատ նկարներ է ստեղծում, բայց փաստորեն նա ստեղծում է մեկ նկար՝ իր նկարը»: Եվ եթե ինչ-որ տեղ վերադարձ է ապրում նկարիչը, ապա միայն իրեն է վերադառնում:

Ստեղծագործության ընթացքում, սակայն, վարպետանում է նկարիչը, հեռզհետե կատարելագործվում, բյուրեղանում են արտահայտչական ձևերը, դառնալով նրա ինքնատիպության բնորոշիչը: Ահա այս հանգամանքն է հենց ոգևորում դիտողին Ռ. Խաչատրյանի նոր աշխատանքներին ծանոթանալիս:

Արվեստի յուրաքանչյուր գործ կարող է հաղորդակցանալ մարդուն իր մեջ ներդրված բովանդակությամբ: Եվ եթե հիշենք, որ արվեստի երկի բովանդակությունը նաև ստեղծագործողի մարդկային բովանդակության արտահայտությունն է, ապա պիտի ասել, որ Ռ. Խաչատրյանի աշխատանքներում ներդրված մտքերն ու ապրումները նաև իր ներաշխարհի, իրականության, կյանքի ի՛ր ընկալման անմիջական արձագանքն են՝ ինքնուրույն գեղարվեստական մարմնացում ստացած:

Պարզորոշ շոշափելու համար այն նորը (թե բովանդակության և թե ձևի տեսակետից), որ դրսևորում է գտել Ռ. Խաչատրյանի վերջին գործերում, փորձենք համեմատել դրանք նկարչի վաղ շրջանի աշխատանքների հետ:

«Ուսանողուհու դիմանկարում» (1959), օրինակ, պատկերի բովանդակությունը հիմնականում մնում է ընտրված սյուժեի ոլորտներում, այսինքն՝ դիտողի մտքերը բնորդի տվյալ վիճակից այն կողմ չեն անցնում: Կոմպոզիցիայի հետաքրքիր, ոչ սովորական կառուցվածքը (բնորդը դիտված է որոշ ռակուրսի մեջ), աշխույժ, անկաշկանդ, արտիստիկ գծանկարը բանաստեղծական շունչ են հաղորդում սյուժեին և դարձնում այն դյուրընկալ ու առինքնող: Արտահայտչական միջոցների նույն արժանիքներով, բայց կերպարի հոգեբանության առավել շեշտմամբ է բնորոշվում

սանգինայով կատարված «Մեր կնոջ դիմանկարը» (1968)։

Նոր սերունդը՝ իր խոհերով ու ապրումներով, իղձերով ու երազանքներով վերջին դարձերում հանդես է գալիս իբրև պատկերման գլխավոր օբյեկտ։ Կինոօպերատոր Ս. Ֆիլիպովի, դերասան Ն. Բուդյանի, բանաստեղծ Ռ. Դավոյանի, նկարչի կնոջ՝ նատաշայի և այլ դիմանկարներում արվեստագետը դիպուկ միջոցներով դիտողին հաղորդակից է դարձնում իր հերոսների ներաշխարհին։ Անշուշտ պիտի նսեմանար այդ աշխատանքների էսթետիկական արժեքը, եթե նկարիչը սահմանափակվեր սոսկ իր կերպարների հոգեկանի բացահայտմամբ։ Յուրաքանչյուր դիմանկարում Խաչատրյանը հետամուտ է գումարելու նաև «իրենը»։

Նկարիչը հաղվագեպ է դիմում ծավալի զգացողություն առաջացնող սավերումների։ Ամեն ինչ սկսում ու ավարտվում է լոկ գծով։ Խաչատրյանի գիծը ծայր աստիճան նուրբ է, սահուն, երգային։ Յուրաքանչյուր դիմանկարի մեջ հատուկ խնամք է տարված գծի հնչողական ուժը թղթի ճերմակ հարթության հետ ներդաշնակելու, գծանկարի ընդհանուր կատարելությունն ու ավարտվածությունը պահպանելու համար։ Հետաքրքիր է, որ այս հատկությունների շնորհիվ գծանկարներն ընկալվում են իբրև մարմարի վրա դասական շնչով կատարված բարձրաքանդակներ։

Այստեղ չկա արտաքին էքսպրեսիա, դինամիկ, պոռթկացող հույզ, ամեն ինչ թվում է հանգիստ, խաղաղ, մի տեսակ բանաստեղծական, վերկենցաղային։ Գծերի՝ հաճախ զարմանք հարուցող վարպետությամբ հյուսված մաքուր, թարմ, թափանցիկ, ազնվաբարո մթնոլորտը կաշառում է դիտողին, ակամա մղում ազնիվ ներշնչումի՝ առնչված բնության գեղեցկության, երիտասարդական ապրումների ու երազանքների հետ։ Նկարիչն ասես պարտադրում է մոռանալ բաներ, որոնցից մարդը խորշում է, ու հիշեցնում է նվիրական մտքեր, որոնց մասին նա հաճախ մոռանում է։ Մի խոսքով, Խաչատրյանի գծանկարային արվեստը ներկայանում է մեզ իբրև իրականության մի թարգմանություն, որի հիմքը արդեն իրականությունը անկնճիռ, վճիտ տեսնելու խոր հավատն է։



Ռուդոլֆ Խաչատրյան. Մեր կնոջ դիմանկար. 1968

Ռ. Խաչատրյանի հետապնդած այս որոշակի գաղափարից, կամ փիլիսոփայությունից է գալիս, որ սյուժեները նրա գործերում կենցաղային նկարագրումից հեռու են, թեև պատկերված անձիք մեր շրջապատի մարդիկ են, իսկ նատյուրմորտների մաս կազմած իրերը՝ առօրեական, սովորական իրեր։ Այս բոլորը դիտողին առաջնորդում են տեսնելու նկարչի հոգևոր կապը դասականների, վերածննդի արվեստի հետ, մի բան, որ առհասարակ նոր բան չէ Խաչատրյանի համար։

Ինքը, նկարիչը շեշտում է դասական արվեստի հետ ունեցած հարազատությունը։ Դա նրա դավանանքն է, անհուն սերն ու հավատը բնության, իբրև ամենահրաշալի ու հավերժական ստեղծագործության հանդեպ, որի պատկերման անկրկնելի օրինակները գեղարվեստի մեջ տվել են դասականները։ Եվ եթե հիշենք, որ ժամանակակից արվեստը իր ձևական անսահմանափակ որոնումներից, պայմանականության ու վերացականության ծայրահեղ դրսևորումներից հետո նորից է ձգտում արվեստին վերադարձնել նրա մարդկային խորքը, ապա հասկանալի կդառնա, թե որքան բարձրանում է դասական ու հատկապես վաղ դասական արվեստի նշանակությունը այսօրվա արվեստագետների ինքնարտահայտման նոր ձևերի մշակման մեջ։

Ռ. Խաչատրյանը դասականների հետևորդն է այս իմաստով, հետևորդը, բայց ոչ կրկնողը։ Ավելի ճիշտ կլիներ ասել, դասականությունը նրա մոտ ստեղծագործական մտածելակերպ է, սկզբունք, որի արմատները սնունդ են առնում ոչ թե այս կամ այն վարպետից, այլ բնությունից։

Հրաշքը բնությունն է։ Այն հրաշք է իր յուրաքանչյուր դրսևորման, յուրաքանչյուր մասնիկի մեջ։ Եվ Խաչատրյանի արտահայտչական միջոցները ուշադիր զննելիս կնկատենք նրա երկրպագությունը այդ հրաշքին, նրա ձգտումը իր պատկերներում անաղարտ արտահայտելու բնության հաղորդած ներշնչանքը։

Անուրանալի արժանիքների հետ մեկտեղ, սակայն, Ռ. Խաչատրյանի գծանկարներում նկատելի են այլ հատկանիշներ, որոնք մտորելու և մտահոգման առիթ են տալիս։ Փորձենք նկարչի նույն բնույթի մի քանի տասնյակ գործեր դնել կողք-կողքի ու միասին դիտել։ Հետամուտ լինելով հեղինակի շոշափած բովանդակությանը, կնկատենք, որ նոր աշխատանքները, անկախ սյուժեի բազմազանությունից, քիչ բան են ավե-



Ռուդոլֆ Խաչատրյան. Ինքնադիմանկար. 1972

Ռուդոլֆ Խաչատրյան. կինոօպերատոր Ս. Ֆիլիպովի դիմանկարը. 1972



լացնում միմյանց, չեն օգնում ավելին տեսնելու, և մի տեսակ կրկնություն են թվում։ Ինչի՞ց է գալիս սա։ Ինձ թվում է նրանից, որ Ռ. Խաչատրյանի ստեղծագործական մեկնակետը առավելապես հիմնված է դատողության, տրամաբանության վրա։ Նաև այս է պատճառը, որ ապրված հույզերն ու զգացումունքները լիակատար կենդանի, կենսաթրթիռ արտահայտություն չեն ստանում։ Ինտելեկտը հանդես է գալիս իբրև առաջնային գործոն։

Երջանկությունը գեղեցիկի մասին անրջելու պահանջ է Խաչատրյանի համար։ Իսկ գեղեցիկը նա տեսնում է ամեն ինչի մեջ։ Եվ պատահական չէ պատկերվող օբյեկտի մանրամասնությունների հանդեպ նկարչի տածած հետաքրքրությունն ու սերը։ Ճիշտ է, մանրամասնությունների շեշտումը չի խանգարում հասնելու պատկերի ողջ մակերեսի ամբողջական լուծման, ծավալի ու օդային միջավայրի շոշափելիության։ Նկարիչը հմտորեն կարողանում է մասը ձուլել ընդհանուրին։ Այստեղ նա վարպետ է, ունակ գծին հաղորդելու իր միտքը, գծով «խոսելու» դիտողի հետ։ Բայց, կրկնում եմ, որովհետև պատկերման ելակետը առավելապես թելադրված է գիտակցականով, երբեմն էլ զուտ նկարելու պրոցեսից ստացած բավարարությամբ, այդ պատճառով էլ մանրամասնությունները շատ դեպքերում չեն բարձրանում արվեստի մակարդակի, մնում են պաղ կերպավորման ոլորտում։ Այստեղից էլ՝ նկարչի բծախնդրությունը, գծանկարի տեխնիկական կատարելությունը երբեմն թվում են չափազանցված։

Կրկին վերհիշելով Ռ. Խաչատրյանի անդրանիկ գործերը, գտնում եմ, որ գնալով դեպի բովանդակության խորություն, առավել ցայտուն դրսևորում տալով իր ինքնուրույն արտահայտչա-



Ռուդոլֆ Խաչատրյան. Մարիամիկը պատուհանի առջև. 1972

կան լեզվին, նկարիչը ինչ-որ չափով կորցնում կամ, ավելի ճիշտ, անտեսում է կարևոր մի հատկանիշ՝ արվեստի երկին կենսունակություն հաղորդող անմիջականությունը։ Մի բան, որ ընդհանրապես կերպարվեստի ժամանակակից ըմբռնման ամենաբնորոշ գծերից է։ Սակայն, չի կարելի մոռանալ, որ անմիջականությունը, հուզական պոռթկումը, պոետիկական ներշնչանքը առհասարակ խորթ հատկանիշներ չեն Խաչատրյանի համար և վաղ թե ուշ ամբողջ ձայնով խոսելու են նրա նկարներից...

34764

ԳԻՆԸ 50 կոպ.

ԻՆԴԵՔՍ 77822

СОВЕТАКАН АРВЕСТ

(«СОВЕТСКОЕ ИСКУССТВО»)

Ежемесячный журнал на армянском языке Министерства культуры Арм. ССР и Государственного комитета Совета Министров Арм. ССР по кинематографии